

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ

2022թ.

ՅԳՈՐԻԱ ՏՈ

29.04.2022

Կապանում Իրանի հյուպատոսության բացումը նոր մակարդակի համագործակցության հիմք կդառնա

Ապրիլի 29-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն ընդունել է ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Չոհուրիին:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը, Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ Ալեքսանդր Մամիկոնյանը:

Հանդիպմանը քննարկված հիմնական թեման Կապանում Իրանի բացվելիք հյուպատոսությունն էր ու այդ համատեքստում Սյունիքի եւ ԻԻՀ միջեւ տարբեր ոլորտներում համագործակցության խորացման ու ամրապնդման ուղղությամբ տարվելիք աշխատանքը:

Մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը շնորհակալություն հայտնեց դիվանագետին այցի համար՝ նշելով, որ Իրանի հետ հարաբերությունները շատ կարեւոր են Հայաստանի Հանրապետության, բայց հատկապես Սյունիքի համար, եւ մարզային իշխանությունը պատրաստ է ամեն ինչ անել՝ երկկողմ հարաբերություններն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Դեսպան Չոհուրին, շնորհավորելով մարզպետին նշանակման կապակցությամբ, նշեց, որ չնայած մշակութային սերտ կապերին, տնտեսական հարաբերությունները երկու երկրների միջեւ ցանկալի բարձր մակարդակում չեն, ու պետք է ջանքեր ներդնել այդ ուղղությամբ: Նա նաեւ շնորհակալություն հայտնեց այս տարվա մարտին առատ տեղումների պատճառով անանացանելի դարձած միջպետական մայրուղում դժվարության մեջ հայտնված իրենց քաղաքացիներին օգնելու համար:

Քաղաքական մի քանի շեշտադրում անելով՝ դեսպանը հիշեցրեց Իրանի դիրքորոշումը ՀՀ միջազգայնորեն ճանաչված սահմանների անխախտելիության մասին եւ ասաց, որ բոլոր երկրները պետք է դա հարգեն.«Մեզ համար անընդունելի են հաղորդակցության ուղիների շուրջ միջանցքների վերաբերյալ հնչող արտահայտությունները, մենք կարծում ենք, որ ՀՀ-ն պետք է պահպանի իր տարածքային ամբողջականությունը»:

Սյունիքի մարզպետն ու Կապան համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեցին դեսպանին՝ «միջանցքի» վերաբերյալ Իրանի պաշտոնական դիրքորոշման համար: «Ձեր տեսակետը կարեւոր ու գնահատելի է յուրաքանչյուր սյունեցու համար», - ասաց Ռոբերտ Ղուկասյանը:

Իրանական կողմը ինը ամիս առաջ Կապանում հյուպատոսություն բացելու համաձայնություն էր ձեռքբերել, ու Աբբաս Բադախշան Չոհուրին նշեց, որ Սյունիքում դիվանագիտական ներկայացուցչություն բացելու նպատակը բոլոր ոլորտներում հարաբերությունները զարգացնելն է: Դեսպանը ներկայացրեց նաեւ հանդիպմանը ներկա հյուպատոսին՝ հավելելով, որ առաջիկայում հյուպատոսության կազմը կներկայացնեն ՀՀ ԱԳՆ-ին:

Իրանական կողմը խոսեց «Հյուսիս-հարավ» ճանապարհի Սյունիքով անցնող հատվածի հանդեպ իրենց հետաքրքրվածության մասին եւս ու տեղեկացրեց, որ դրա շինարարությանը մասնակցելու պատրաստակամություն հայտնած իրանական ընկերություններ կան:

Կողմերը խոսեցին նաև հյուպատոսության բացումից հետո սպասվող նոր մակարդակի համագործակցության մի շարք ուղղությունների մասին՝ քննարկելով տնտեսական, կրթական, մշակութային ու այլ հարցեր:

Գեւորգ Փարսյանը հայտնեց, որ սեպտեմբերից համայնքային ենթակայության ուսումնական հաստատությունում կսկսվի պարսկերենի դասավանդումը: Անդրադարձ եղավ նաև մարզկենտրոնի եւ իրանական որեւէ քաղաքի միջեւ քույր քաղաքների հարաբերություններ հիմնելու հնարավորությանը:

Այցի ավարտին իրանցի հյուրերը Կապանում ապագա հյուպատոսության շենքի համար տարածքներ դիտարկեցին:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/04/29/Irani_despan_ayc/

29.04.2022

**ԳՊՀ-Ի ԵՎ ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵԶԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ**

Այսօր Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Թեհմինա Մարությանը և Գորիսի պետական քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանը ստորագրեցին համագործակցության հուշագիր, որը նախատեսում է փոխգործակցության ակտիվացում և բարելավում մի քանի հիմնական ուղղություններով:

Հանդիպմանը ներկա էին Գորիսի պետական քոլեջի կադրերի վարիչ Հ. Օրդյանը, Գորիսի պետական համալսարանի արտաքին կապերի և համագործակցության բաժնի ղեկավար Ն. Սաֆարյանը, ուսումնական մասի վարիչ Վ. Դանիելյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատար Ս. Մանուչարյանը, գիտական քարտուղար Լ. Թունյանը:

Թ. Մարությանը, շնորհակալություն հայտնելով քոլեջի տնօրեն Կ. Լազարյանին կրթական երկու հաստատությունների միջև ուսումնագիտական կապերը նոր, ավելի ամուր հիմքերի վրա դնելու առաջարկը ողջունելու համար, ներկայացրեց այդ կապերը ամրապնդելուն ու զարգացնելուն ուղղված հեռանկարային քայլերը՝ ըստ ռազմավարական նպատակների, համագործակցության ուղղությունները, հավաստիացրեց, որ ԳՊՀ-ն պատրաստ է պատշաճ մակարդակով իրականացնելու համաձայնագրով նախատեսված աշխատանքները և ակնկալում է համարժեք պատասխանատվություն քոլեջից, որը, որպես ՄՄՈՒՀ, իր պատմությամբ, կրթական ավանդույթներով, թողարկած որակյալ կադրերով մշտապես կարևոր դեր է խաղացել տարածաշրջանում:

Կ.Լազարյանը նույնպես շնորհակալություն հայտնեց բուհի ղեկավարությանը՝ ի դեմս Թ.Մարությանի, համագործակցության օրապահանջ ու սպասված առաջարկի համար: Նա նշեց, որ ժամանակի մարտահրավերները թելադրում են արտաքին շահակիցների հետ համագործակցության մեխանիզմների բազմազանեցում ու բարելավում, առաջավոր փորձի փոխանակում՝ ի շահ կրթական ծառայությունների շարունակական բարելավման:

ԳՊՀ-ի և Գորիսի պետական քոլեջի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում կողմերը կհամագործակցեն հետևյալ ուղղություններով՝ սահմանված կարգով կազմակերպել հավակնորդների (քոլեջի շրջանավարտների) կրթության շարունակումը բուհում՝ ըստ կրթաձևերի նախապես հայտագրված մասնագիտությունների

գծով՝ կատարելով «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգ»-ով սահմանված պահանջները, կհամապատասխանեցվեն ու կվերանայվեն այդ մասնագիտությունների գծով ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, փոխադարձ պրակտիկաների կազմակերպում, այդ թվում՝ գիտամանկավարժական ու հետազոտական, քոլեջի սովորողների համար կազմակերպվել ճանաչողական այցեր՝ ծանոթացնելու բուհի մասնագիտություններին, կրթական միջավայրի առանձնահատկություններին, հնարավորություն ընձեռել քոլեջի ուսանողներին ու դասախոսներին՝ օգտվելու համալսարանի մասնագիտական լաբորատորիաներից, կաբինետներից, գրադարանից, իրականացնել համատեղ թեմատիկ, մշակութային միջոցառումներ, գիտական սեմինարներ, քոլեջի դասախոսներին իրազեկել համալսարանում կազմակերպվող գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների և այլ միջոցառումների մասին՝ բարելավելով ներգրավվածության մեխանիզմները, համագործակցել երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական ու կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

Պատասխանատուները արդյունավետ քննարկում ունեցան համագործակցության ուղղություններին վերաբերող հարցերի շուրջ և համոզմունք հայտնեցին, որ առկա նախադրյալները կնպաստեն՝ արձանագրելու բարեհաջող արդյունքներ:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3yq29gv>

27.04.2022

Հայաստանում Ռուսաստանի դեսպանատանը ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Մերգեյ Կոպիրկինն ընդունել է Սյունիքի մարզի Կապան քաղաքի ավագ դպրոցի աշակերտների «Ինտեգրացիա» ինտերակտիվ խաղի հաղթողներին

Հաղթողներ Սյունե Միրզոյանի, Արիանա Ազարյանի, Մարիամ Համբարձումյանի և Անահիտ Ալեքսանյանի համար գլխավոր մրցանակը ուղևորություն էր Երևան և հանդիպումը Հայաստանում Ռուսաստանի դեսպան Մերգեյ Պավլովիչ Կոպիրկինի հետ:

«Ալտեր Էգո» կոչվող հաղթող թիմի անդամները դեսպանին պատմեցին իրենց «Նոր կամավորներ» սոցիալական նախագծի մասին, որը կոչված է համախմբելու Կապանի դպրոցականներին և ուսանողներին կամավորության նպատակով, ոգեշնչելու Ռուսաստանից եկած կամավորներին աշխատել Կապանում: Եվ բացի «գործնական գրույցներից», աղջիկները ջերմ մթնոլորտում խոսեցին իրենց երազանքների ու ապագայի ծրագրերի մասին:

Սյունիքի մարզում Ռուսական տան նախագծերի համակարգող Լյուդմիլա Ադախանյանը խոսեց Կապանի կյանքի մասին, որի սահմանը պահպանում են ռուս սահմանապահները հայ զինվորների հետ միասին:

2021 թվականի դեկտեմբերին Հայաստանում Ռոսստորոնիչեստվոյի ներկայացուցչությունը կազմակերպել էր «Ինտեգրացիա» ինտերակտիվ խաղ Սյունիքի սահմանամերձ ավագ դպրոցի աշակերտների համար: Նախագծին մասնակցել է 7-ից 12-րդ դասարանների 16 աշակերտ, որոնք բաժանվել են 4 թիմի: Բոլոր թիմերը մեծ աշխատանք են կատարել իրենց նախագծերի ներկայացման համար նյութեր կազմելու ուղղությամբ:

նկարահանվել են տեսահոլովակներ Կապանի մշակույթի ակնավոր գործիչների մասնակցությամբ, ցուցադրվել են քաղաքի տեսարժան վայրերը, որոնք կարող են գրավել զբոսաշրջիկներին: Եզրափակչում բոլոր աշխատանքները ներկայացվեցին ժուրիի անդամներին:

Հաղթող է ճանաչվել այն թիմը, որն առաջարկել է սոցիալական ծրագիր՝ ուղղված Կապանում կամավորական շարժում սկսելուն:

Նախագծի համակարգողներն էին Հայաստանում Ռոսսոտրուդնիչեստվո ներկայացուցչության աշխատակիցները ինչպես Երևանում, այնպես էլ Սյունիքի մարզի Կոնտակտային կենտրոնում: Երեք ամիս ակտիվ աշխատանք է տարվել յուրաքանչյուր թիմի հետ առանձին՝ թե՛ Կապանում, թե՛ Երևանից՝ հեռակա:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/356893129813391>

27.04.2022

ՀՈՒՇԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԲԱՑՈՒՄ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 26-ին Սյունիքի մարզպետարանում բացվեց ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրի» (UN WFP) մարզային գրասենյակը: Ծրագիրը վաղուց է գործունեություն ծավալում Սյունիքում, սրանով այն ավելի մոտեցվեց մարզին, ու տեղում կհամակարգվի կազմակերպության աշխատանքը:

Մինչ այդ մարզպետարանում համագործակցության հուշագրեր են ստորագրվել մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի, ՊՀԾ-ի տնօրենի պաշտոնակատար Նաննա Սկաուի, ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Արման Խոջոյանի ու Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանի միջև:

ՊՀԾ-ը համալսարանի Սիսիանի մասնաճյուղում հիմնում է ուսումնափորձարարական կենտրոն, որը խելացի գյուղատնտեսության փորձնական տարածքներ կունենա. այստեղ կլինեն ջերմոց, մետեոկայան, տեխնոպարկ, ինտենսիվ այգի, անասնակերի հիդրոպոնիկ աճեցում եւ այլն: Կենտրոնը գիտական-ուսումնական բազա կլինի թե՛ ուսանողների համար, որոնք իրենց գիտելիքները կփորձարկեն գործնականում, թե՛ մարզի ֆերմերների, որոնք այստեղ կանցնեն վերապատրաստումներ, դասընթացներ, կստանան գյուղատնտեսական խորհրդատվություն, կծանոթանան նոր տեխնոլոգիաների միջոցով ոլորտի զարգացման հնարավորություններին: Բացի դրանից, մասնաճյուղում կբացվի հողի անալիզի լաբորատորիա, որը մարզը չունի:

Մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, շնորհակալություն հայտնելով կազմակերպությանը մարզում կատարվող ներդրումների համար, նշեց, որ կենտրոնի հիմնումը շատ կարևոր է, քանի որ սրանով գիտությունը եւ գիտական միտքը ներդրվում են գյուղատնտեսական ոլորտում. «Սա իր հերթին կապահովի գյուղոլորտում ամբողջական արժեշտային բացահայտմանը եւ կիրառմանը, իսկ մոտ ապագայում մարզում երիտասարդ մասնագետների թվի աճ կունենանք, որի կարիքը շատ կա»:

Արման Խոջոյանի խոսքով սրանով ձեւավորվում է մի հարթակ, որը միավորում է բնագավառում ներգրավված բոլորին՝ ֆերմերներ, գիտական ներուժ, կրթություն, կառավարություն, համայնքային ու մարզային իշխանություն, միջազգային կազմակերպություններ, ու բոլորի ձայնը լսելի է դարձնելու, նաեւ մեկտեղելու համագործակցության հնարավորությունները:

Նաննա Սկաուն ներկայացրեց այն ներդրումները, որ մինչ այժմ ՊՀԾ-ը արել է մարզում եւ անելու է. ներդրվել է 1.35 մլն դոլար, պատրաստվում են եւս 3.8 մլն դոլարի ներդրում կատարել Սյունիքում: ՊՀ ծրագրում ընդգրկված է մարզի 20 գյուղ եւ քաղաք:

Մինչ հուշագրի ստորագրման հանդիսավոր արարողությունը, մարզպետի մոտ նաեւ հանդիպում էր կայացել, որին մասնակցել են վերոնշյալ պաշտոնյաները, ինչպես նաեւ Սիսիան համայնքի ղեկավարը, Ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի տնօրենը, մարզի ֆերմերներ: Քննարկվել են հիմնվող կենտրոնի արդյունավետությունն ու ստեղծվող հնարավորությունները, իսկ մարզպետը, ներկայացնելով Սյունիքում գյուղատնտեսության զարգացման ներուժը, պատրաստակամություն է հայտնել աջակցել ոլորտի բոլոր դրական նախաձեռնություններին:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/04/27/WFP_office_opened_in_Syunik/

27.04.2022

Համագործակցության հուշագիր՝ համայնքի եւ «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության միջեւ

Այսօր Կապանի համայնքապետարանում տեղի ունեցավ սոցիալ-տնտեսական համագործակցության մասին հուշագրի ստորագրում՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի եւ «Չաարատ Կապան» փակ բաժնետիրական ընկերության միջև: Հուշագիրը ստորագրեցին Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը եւ «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը: Հուշագրի համաձայն՝ ընկերությունը սոցիալ-տնտեսական համագործակցության շրջանակներում 130 մլն դրամով ֆինանսավորում է Լեռնագործների 16 հասցեում կառուցվող նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնանորոգման աշխատանքները:

Փաստաթղթի ստորագրմանը ներկա էին համայնքապետարանի աշխատակազմը, «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության ներկայացուցիչները եւ Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում ընդգրկված ավագանիները:

Ողջունելով ներկաներին եւ կարևորելով «Չաարատ Կապան»-ի հետ համագործակցությունը՝ համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը ընդգծել է, որ իրականացվող համատեղ ծրագիրը ավարտին հասցնելով կլուծվի համայնքի կարևոր խնդիրներից մեկը. մասնավորապես՝ ՆՈՒՀ-ի գործարկումով լուծվելու է շուրջ 146 երեխայի հաճախելիության խնդիր, ստեղծվելու են աշխատատեղեր, հատկապես կանանց զբաղվածությունն ապահովելու համար եւ իհարկե, երեխաներին նախադպրոցական կրթության մեջ առավելագույն չափով ներգրավելու համար արժանավայել պայմաններ:

Հանդիպման ավարտին կողմերը հույս են հայտնել ավելի ամրապնդելու արդյունավետ համագործակցությունը եւ կարևորել դրա շարունակականությունը:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3vX2F2p>

26.04.2022

Ստեփանակերտ-Գորիս միջպետական ավտոճանապարհին բարեկարգման աշխատանքներ են իրականացվում

Ստեփանակերտ-Գորիս միջպետական ավտոճանապարհին իրականացվում են բարեկարգման աշխատանքներ:

Այս մասին «Արցախպրես»-ին տեղեկացնում են ԱՀ քաղաքաշինության նախարարությունից:

Ըստ աղբյուրի՝ Ստեփանակերտ - Բերձոր - Աղավնո միջպետական մայրուղու տարբեր հատվածներում կատարվում են բարեկարգման աշխատանքներ: Ճանապարհաշինական աշխատանքներն այժմ շարունակվում են ավտոճանապարհի առանձին հատվածներում՝ իրականացվելով ասֆալտբետոնե ծածկույթի քայքայված և վնասված տեղամասերի հեռացման և նորոգման աշխատանքներ: Գործընթացն իրականացվում է «Կապավոր» ՍՊ ընկերության կողմից:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/stepanakert-goris-mijpetakan-avtochanaparhin-barekargman-ashkhatanqner-en-irakanatsvum>

21.04.2022

Ներքին Հանդը՝ Սյունիքի հարավ-արևելյան դարպասը, արքանի մեջ է

Սյունիքի սահմանապահ գյուղերի վիճակը 2020 թ. դեկտեմբերի 18-ից հետո (մեղմ ասած) նման չէ մինչ այդ եղած կացությանը:

Փոփոխությունն ակնհայտորեն նկատելի է Ծավի ենթաշրջանում, և առաջին հերթին՝ անվտանգային համակարգի նոր, երբևէ չեղած նկարագրով: Ավելի կոնկրետ՝ Ծավի ամբողջ ենթաշրջանը՝ ճակատենից մինչև Շիկահող, մինչև Սրաշեն, ապա մինչև Ներքին Հանդ, կարծեք, պաշտպանական մի կուռ համակարգ է այլևս:

Այդ բնակավայրերից դեպի արևելք ադրբեջանական հենակետեր են, նորաբաց կամ նոր կառուցվող ճանապարհներ, որոնք անգն աչքով անգամ տեսանելի են մայրուղուց:

Ծավի ենթաշրջանում և ընդհանրապես ամբողջ Սյունիքում ռազմավարական առանձնահատուկ դիրք է զբաղեցնում Բասուտա գետի հովիտը, որի կենտրոնում Ներքին Հանդ գյուղն է՝ երեք կողմից ադրբեջանական դիրքերի հայացքի ներքո...

Անկեղծ ասած՝ Սյունյաց աշխարհի բազում բնակավայրեր են հիմա Ադրբեջանի զինյալների դեմ հանդիման, բայց Ներքին Հանդ.... Նեղ սեպի նման այն խրված է ադրբեջանական դիրքերի մեջ:

Գյուղն արքանի մեջ հայտնվեց կամ գյուղի այդ վիճակը վերջնականապես ձևավորվեց 2022 թ. մարտի առաջին օրերին, երբ ադրբեջանցի զինյալները (առանց դիմադրության հանդիպելու) բռնազավթեցին գյուղի հարավային՝ իշխող բարձունքներից մեկը, որ տեղացիները կոչում են Ճղարանց արտեր կամ Շինատեղի դիմացի բարձունք:

Հայաստանում այդ օրերին բարձրացած արդարացի աղմուկը չխանգարեց, որ ադրբեջանցիները մոտ 700-800 մ երկարությամբ ճանապարհ բացեն (ոլորաններով) դեպի նորահնար առաջնագիծ, որտեղ արդեն իսկ նրանց մարտական դիրքն էր՝ նախկինում երբևէ գոյություն չունեցած:

Այդ բարձունքից, որ ի սկզբանե (նաև խորհրդային ժամանակներում) Ներքին Հանդի վարչական տարածքի մաս էր, ոչ միայն դիտարկվում են գյուղի գերեզմանը, հին գյուղատեղին՝ Սուրբ Գևորգ եկեղեցիով, նաև Շենատեղի Սուրբ Հռիփսիմե սրբավայրը, այլև Ծավի ենթաշրջանի մեծ մասը...

Ներքին Հանդի մերձակայքի օկուպացիայից հետո մեր կողմից էականորեն ուժեղացվել է հայկական պաշտպանական գիծը, ինչը, անշուշտ, դրվատանքի է արժանի: Այդ առումով գնահատելի է նաև երկրապահ-կամավորականների վարքը, ովքեր Սասուն Միքայելյանի գլխավորությամբ հետևողականություն են ցուցաբերում...

Տեղի բնակիչներին որոշ չափով հույս է ներշնչել նաև Կապան-Ծավ մայրուղուց դեպի Ներքին Հանդ ձգվող ճանապարհի խաչմերուկում (մարտյան դեպքերից հետո) կարգված ռուսական հենակետ-անցակետը, թեև այնքան էլ հասկանալի չէ, թե ինչու հենակետը Ներքին Հանդում չի տեղակայվել կամ նրա արևելյան մատույցներում, այլ գյուղից 4,5 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք:

Իմիջիայլոց, այդ հենակետ-անցակետը որևէ խոչընդոտ չի հարուցում եկող-գնացող մեր բնակիչներին:

Ձեռնարկված քայլերը, սակայն, ըստ գյուղաբնակների՝ բավարար չեն...

Սահմանի վրա կան տեղեր, որոնք շարունակում են մնալ խոցելի, ինչի մասին գյուղի պատասխանատուները քանիցս տեղեկացրել են պատկան մարմիններին:

Եվ նման շատ հարցեր, որոնք մտահոգում են գյուղացիներին, հաճախ նաև անորոշության, անվստահության տեղիք տալիս...

Ներքին Հանդում ապրիլի 20-ին հանդիպումներ ունեցանք բնակիչների, նաև գյուղի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանի հետ. հայրենի եզերքի իսկական նվիրյալ է գյուղի ղեկավարը, ում առնչվել էինք նաև Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ՝ գյուղի արևելյան ուղղության առաջնագծում, իսկ հիմա մտահոգ է իր բնօրրանի հիմնախնդիրներով:

- Պարոն Բաղդասարյան, նախ՝ գյուղում իշխող մթնոլորտի մասին՝ մարտյան հայտնի իրադարձություններից հետո:

- Հուսալքության, խուճապի մասին խոսք լինել չի կարող, բայց կա մտահոգություն... Այս պահին գյուղում ապրում է 31 ընտանիք, այդքան էլ եղել է:

- Ի՞նչ տեղի ունեցավ գյուղի մերձակայքում այս տարվա մարտի առաջին օրերին:

- Թշնամու կողմից առաջխաղացում եղավ, եկան ու նստեցին, հետո էլ սկսեցին ճանապարհ կառուցել. մոտ 750 մ առաջ են եկել:

Դրան հակակշիռ քայլեր ձեռնարկվեցին մեր կողմից. իրենց դեմ հանդիման մեր մարտական դիրքերն են:

- Եվ եթե փորձենք ընդհանուր գծերով գնահատել գյուղի անվտանգության վիճակը...

- Չանգելանի կողմն ինչպես կար, այնպես էլ մնում է. կանգնած ենք և՛ մենք, և՛ իրենք, միջադեպեր չեն լինում: Միայն ճանապարհ են կառուցում նրանք, որ դեռ ավարտված չէ:

Սահմանի մոտակայքում հողեր ունենք՝ 40 հա այգի, որ չի օգտագործվում. ռիսկերը մեծ են...

- Ներգյուղական խնդիրների մասին կուզենայինք իմանալ ևս մեկ անգամ:

- Խմելու ջրի խնդիր ունենք, ներքին ցանցն էլ շարքից դուրս եկած վիճակում է:

Անասուններն ամառային արոտներ հասցնելու գործում էլ ռիսկեր կան՝ պայմանավորված աղբբեռանցիների վերջին առաջխաղացմամբ:

- Կառավարությունն ուզում է գյուղում նոր դպրոց կառուցել կամ եղածը հիմնանորոգել:

- Մասնագետներ են եկել, չափագրումներ են արել...

Բայց ու՞մ համար են դպրոց կառուցում, յոթ դպրոցական ունենք:

- Այգիներից բացի մյուս հողերը հաջողո՞ւմ եք մշակել:

- Աշնանացան ցորենի ցանքսեր ունենք՝ 15 հա-ի վրա, տնամերձերն են մշակվում՝ ապահովված են ոռոգման ջրով:

- Ուրիշ ինչո՞վ են զբաղվում գյուղացիները:

- Մեղվապահությունն է զարգացած, ամեն ընտանիք մեղվաբուծությամբ է նաև զբաղված, յուրաքանչյուրը՝ 30-40, որոշները՝ մինչև 100 փեթակ:

Կարելի է ասել՝ յուրաքանչյուր ընտանիք (բացի գյուղատնտեսությամբ զբաղվելուց) մի աշխատող ունի՝ դպրոցում են, անտառտնտեսությունում, «Շիկահող» պետական արգելոցում:

Բասուտա գետի հովիտը սովորական տարածք չէ մեզանում...

Ներքին Հանդ գնալիս նախ հայտնվեցինք Մթնածորի սկզբնամասում, իսկ Մթնածորը, նաև Ներքին Հանդն ու Մոսիների պուրակը վաղուց աշխարհագրական վայր չեն սուկ:

Մթնածորը մեր ընկալումներում Ակսել Բակունցի «Մթնածորը» պատմվածաշարի գեղարվեստական կուտակումների միջավայրն է, ասել է թե՛ այն հոգևոր տարածություն է հայոց մեջ...

Այնուհետև եղանք Ներքին Հանդում. գյուղամիջով հոսում է Բասուտա գետը. այդ վայրը Մոսի սրբազան ծառի հայաստանյան «բնակատեղին» է: Ըստ մասնագետների՝ Մոսիների պուրակի հայաստանյան հատվածում, որ 64 հա է, ներկայումս հաշվվում է չորս հազար սոսի:

Մոսիների մի տեսակը՝ արևելյան սոսին, Հայաստանում հազարամյակներ շարունակ համարվել է սրբազան ծառ: Հավատացյալներն ունկնդրելով սոսիների սոսափյունը՝ պատգամախոս ոգիների «կամքով» արել են գուշակություններ...

Ներքին Հանդի բնակիչների հետ շփվելուց հետո, երբ արդեն Մոսիների պուրակում էինք, «սոսիների ազդեցությամբ» ինքներս էլ ակամա գուշակություններ արեցինք՝ հայոց Սյունիքի, հայոց Արցախի երթը՝ հազարամյակների խորքից եկող ու հավերժին միտված, ոչ ոք չի կարող խաթարել...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/nerqin-handy-syuniqi-harav-arevelyan-darpasy-aqtsani-mej-e>

19.04.2022

Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը՝ ամենախոշոր հարկատու

2022-ի առաջին եռամսյակում Հայաստանի ամենախոշոր հարկատուն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է՝ վճարած ավելի քան 35,4 միլիարդ դրամի հարկերով: Անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընկերությունը գրեթե քառապատկել է վճարած հարկերը: Այդ մասին տեղեկանում ենք Պետեկամուտների կոմիտեի հրապարակած՝ այս տարվա առաջին եռամսյակի 1 000 խոշոր հարկատուների ցուցակից:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/zangezuri-pkhndzamolibdenayiny-amenakhoshor-harkatu>

18.04.2022

Բնակարանամուտ՝ սահմանամերձ Որոտան բնակավայրում

Երբ ամուր են տան պատերը, ամուր է նաև հայրենիքի սահմանը: Սահմանամերձ Ռրոտանում 6 ընտանիք բնակարանամուտ է տոնում: Սահմանին ապրողների համար բարեկարգ տուն ունենալը ոչ միայն հարմարավետության է, այլ նաև ռազմավարական խնդիր: Ամրացնել սահմանը պահող գյուղերը՝ սա է նաև օրվա հրամայականը: Գորիս համայնքի միջոցներով Ռրոտանում համայնքային նշանակության շենքը հիմնովին նորոգվել է: Բնակարանամուտ տոնող 6 ընտանիքներից 3-ը Արցախից տեղահանված են: Այսօր Ռրոտան էին այցելել բազմաթիվ հյուրեր՝ բնակարանամուտի ուրախությունն ընտանիքների հետ կիսելու համար: Ընտանիքներին բնակարանի բանալիները հանձնել են «Հայաստան» դաշինքի պատգամավորներ Արթուր Սարգսյանը, Միլիթար Զաքարյանը, Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը, ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը,

Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, Քաջարան համայնքի ղեկավարի տեղակալ Զոհրաբ Առաքելյանը: Ուրախալի է, որ որոտանցիները ամուր պահում են բնակավայրը, այն վերաբնակեցվում է, նոր ընտանիքներ են տեղափոխվում: Առաջիկայում նաև ռոտգման ջրագծերի կառուցման ծրագիրը կմեկնարկի: 6 ընտանիքները վաղուց էին սպասում, նրանց համար անհնարին թվացող խնդիրներն այսօր լուծվել է: Համայնքի խնդիրն է, կառուցել, շենացնել՝ բնակիչների համար ստեղծելով պայմաններ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/5119181604842712>

16.04.2022

Լուծվում է Խնձորեսկ բնակավայրի կարևոր խնդիրներից մեկը՝ ռոտգման ջրագծերը վերակառուցվում են (տեսանյութ)

Տասնամյակներ անց լուծվում է Խնձորեսկ բնակավայրի կարևոր խնդիրներից մեկը՝ ռոտգման ջրագծերը վերակառուցվում են: Ծրագրի իրականացման արդյունքում բնակավայրում լուրջ խնդիրներ են լուծվելու, քանի որ տնամերձ այգիներից զատ վարելահողերն ու այգիներն են նաև ռոտգվելու: Գորիսի համայնքապետարանի և ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում իրականացվում են վերակառուցման աշխատանքներ:

Մանրամասները՝ տեսանյութում՝ <https://bit.ly/3kAB8ic>

14.04.2022

Մելիքսեթ Պողոսյանը՝ ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական

Սյունիքի նախկին մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը, «Սյունյաց երկրի» հետ գրույցում, քիչ առաջ հաստատեց տեղեկությունը, որ նշանակվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի խորհրդական:

Հարցին, թե ինչով է պայմանավորված այդ պաշտոնի ստանձնումը, Մելիքսեթ Պողոսյանը մասնավորապես ասաց՝ «Երեսուն տարի ծառայել եմ հայոց ազգային բանակում եւ հնարավորություններիս չափով նպաստել մեր բանակի կայացմանը, երկրի սահմանների պաշտպանությանը: Այսօր նույնպես ինձ պատկերացնում եմ հայոց բանակում, մանավանդ որ երկիրը գտնվում է վճռորոշ հանգրվանում»:

Ամենայն հավանականությամբ նա իր գործառույթները կիրականացնի Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում՝ նստավայր ունենալով Կապանը կամ Գորիսը:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/meliqset-pokhosyany-hh-pashtpanutyany-nakharari-khorhrdakan>

14.04.2022

Սյունիք կատարած աշխատանքային այցի ամփոփումը Դավիթ Բեկ սահմանամերձ համայնքում

Ապրիլի 13-ին շարունակելով աշխատանքային այցը Սյունիքում՝ Պաշտպան Գրիգորյանը Գորիսում հանդիպում է ունեցել Արցախից տեղահանված ընտանիքների հետ:

Հանդիպումների ընթացքում Պաշտպանը ծանոթացել է տեղահանված արցախցիների խնդիրներին, լսել ընտանիքների մտահոգությունները, որոնց հիման վրա կատարվել է կենսական կարիքների հավաքագրում և տեղում քննարկվել են կատարվելիք քայլերը:

Պաշտպանը հավաստիացրել է տեղահանված բնակիչներին, որ ՄԻՊ Սյունիքի մարզային գրասենյակի միջոցով նրանց խնդիրները կլինեն իր ուշադրության կենտրոնում:

Այնուհետև, Պաշտպանը այցելել է Սյունիքի մարզի Դավիթ Բեկ սահմանային համայնք, որտեղ հանդիպել է վարչական ղեկավար Բենյամին Պողոսյանի, համայնքի ղեկավարի տեղակալ Մարատ Հարությունյանի և համայնքի բնակիչների հետ, ծանոթացել առկա անվտանգային և սոցիալ-կենցաղային խնդիրներին:

Բնակիչների և ուսուցիչների հետ շփման ընթացքում Պաշտպանին ներկայացվել են նաև մտահոգություններ, որոնք առնչվում են երիտասարդների զբաղվածության խնդրին, գյուղատնտեսությամբ զբաղվելու հարցում բնակիչների ունեցած դժվարություններին, գյուղի հասարակական տրանսպորտի, սահմանամերձ համայնքում ուսուցիչների վարձատրման ու կադրերի խրախուսման հնարավոր մեխանիզմներին:

Պաշտպանը համայնքի ղեկավարի հետ նաև քննարկել է համայնքի կանանց աշխատանքային զբաղվածությամբ ապահովելու համատեքստում կարի արտադրամաս հիմնելու համայնքի մշակած ծրագրի կենսագործմանն աջակցելու տարբերակները:

Աշխատանքային այցի ավարտին Քրիստիննե Գրիգորյանը այցելել է նաև համայնքի «Դավիթ Բեկ» երիտասարդական զարգացման կենտրոն, որի բացումը նախատեսված է առաջիկայում:

Պաշտպանը կարևորել է երիտասարդության համար զբաղվածության ու անհատական զարգացման համար համայնքում բարենպաստ միջավայր ու հնարավորություններ ստեղծելու ջանքերը և իր աջակցությունը հայտնել նմանօրինակ նախաձեռնությանը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/KristinneGrigoryan/posts/302912915360981>

14.04.2022

Գորիսում համայնքային ենթակայության 19 շենքերի տանիքներին կտեղադրվեն արևային ֆոտովոլտային համակարգեր, որոնք կապահովեն էլեկտրաէներգիայի պահանջարկը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ Գորիս համայնքում կտեղադրվեն ֆոտովոլտային համակարգեր: Նախատեսվում է տեղադրել Գորիսի բոլոր ՆՈՒՀ-երի, Գորիսի Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոցի, Մանկապատանեկան մարզադպրոցի, «Գորիս բարեկարգում» ՀՈԱԿ-ի, «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի, Վերիշենի, Խնձորեսկի, Ներիքին Խնձորեսկի, Հարթաշենի, Բարձրավանի, Շուռնուխի վարչական շենքերի, Խնձորեսկի Ա. Սաթունցի անվան երաժշտական դպրոցի տանիքներին: Ծրագիրը ֆինանսավորվում է USAID-ի կողմից: Տեղադրվող կայանների միջոցով հնարավոր կլինի համայնքային բյուջեի ծախսերը կրճատել:

Գործիսի համայնքապետարանի նիստերի դահլիճում հիմնադրամի ներկայացուցիչները խոսել են ծրագրի մասին, պատասխանել հետաքրքրող հարցերին:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/5107718792655660>

13.04.2022

Նոր աշխատատեղեր Լոռիում և Սյունիքում՝ անտառվերականգնման ծրագրերով (տեսանյութ)

Դեգրադացված հողերն ու անտառային տարածքները շատ են հատկապես Լոռիում ու Սյունիքում: Խնդրի լուծման միակ տարբերակը, ըստ մասնագետների, անտառային տարածքների վերականգնումն է:

Արմեն Եսոյան (ՀՀ ՇՄՆ բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի ղեկավար) - Ավելի քան 6300 հեկտար տարածքների վրա իրականացվելու են անտառվերականգնման և անտառհիմնման աշխատանքներ, դրանց մի մասը՝ համայնքային հողերում, իսկ զգալի մասը՝ անտառային հողերում:

Ծրագիրը կիրականացվի Կանաչ կլիմայի հիմնադրամի տրամադրած 10 և Հայաստանի Կառավարության, Ավստրիական զարգացման գործակալության, Իտալիայի Բոլցանո ինքնավար նահանգի և Բնության համաշխարհային հիմնադրամի 8.7 միլիոն դոլար համաֆինանսավորմամբ: Ութամյա ծրագիրը ոչ միայն բնապահպանական, այլև սոցիալական ու տնտեսական արդյունքներ է ունենալու:

Ռայմունդ Ելե (Հայաստանում ՄԱԿ ՊԳԿ ներկայացուցիչ) - Մեզ համար առանցքային նշանակություն ունի ծրագրում ոլորտի դերակատարների ներգրավումը: Ուրախ ենք, որ համապատասխան նախարարություններից, հասարակական կազմակերպություններից, գիտահետազոտական կենտրոններից ու միջազգային կազմակերպություններից փորձագետների խումբ է ներգրավվել այս ծրագրի տարբեր փուլերում՝ սկսած նախագծումից:

Երկու մարզում կկառուցվեն ջերմատներ, տարեկան նախատեսվում է 12 մլն տնկի ստանալ: Ծրագրի զգալի մասը կիրականացվի Սիսիան համայնքում. կկառուցվի 500 քմ տարածքով երկու ջերմատուն, որոնցում նախատեսվում է տարեկան աճեցնել 4 մլն տնկի:

Արմեն Եսոյան - Ընդհանուր առմամբ, 3250 տարածքի վրա կիրականացվի անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքներ, որից 2350 հեկտարը պետական ֆոնդի հողերն են, իսկ 1000 հեկտարը՝ համայնքային դեգրադացված հողերը:

Այս ծրագրի նպատակը Հայաստանում անտառածածկույթը 2,5 տոկոսով ավելացնելն է: Ծրագրի արդյունքում Սյունիքում կստեղծվի 230 աշխատատեղ, նույնքան էլ՝ Լոռիում:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3wjp1LZ>

13.04.2022

ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն այսօր մարզպետարանում ընդունել է «Գեոպրոմայնինգ» ընկերությունների խմբի նախագահ Ռոման Խուրդոյիին ու ընկերության այլ ներկայացուցիչներին:

Հանդիպումը նախ ճանաչողական էր՝ պաշտոնյաները ծանոթացան միմյանց, ու Ռոման Խուդոլիյը շնորհավորեց Ռոբերտ Ղուկասյանին՝ Սյունիքի մարզպետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ:

Երկու կողմերն էլ շեշտեցին «Գեոպրոմայինգի» մասնակցությամբ մարզում գործող երկու ձեռնարկությունների՝ «Ձանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» եւ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունների կարելորագույն դերը մարզի կյանքում:

Այնուհետեւ քննարկվեցին մարզպետարանի ու հատկապես «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի միջեւ համագործակցության, գործընկերային հարաբերությունների, համատեղ համաձայնեցված ներդրումների ու զարգացման ծրագրերի հետ կապված հարցեր, որոնք առաջիկայում առավել մանրամասնորեն կներկայացվեն ու մասնագիտական աշխատանքի արդյունքում շոշափելի կդառնան:

Մարզպետն ու «Գեոպրոմայինգի» ղեկավարը խոսեցին նաեւ երկուստեք հարաբերությունները նոր մակարդակում կայացնելու ճանապարհի մասին:

Պարոն Խուդոլիյը ներկայացրեց իր պատկերացումներն ու այն ծրագրերը, որ նախատեսում է ընկերությունը մարզային կյանքի տարբեր բնագավառներում՝ կարճաժամկետ ու երկարաժամկետ կտրվածքով՝ կարելորելով համագործակցությունը ՀՀ կառավարության ու մարզպետարանի հետ:

Ռոբերտ Ղուկասյանը շնորհակալություն հայտնեց հանդիպման համար ու փոխանցեց համատեղ աշխատանքի մարզային իշխանության տեսլականը՝ ի շահ Սյունիքի սոցիալ-տնտեսական, կրթական-մշակութային կյանքի զարգացման:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/347526964083341>

12.04.2022

Խորհրդավոր զարգացումներ Սյունիքի շուրջ. կա՞մարզում մի պաշտոնյա կամ կառավարման մի մարմին, որ ներկայացնում է երկրամասի շահերը
Ինչ-որ իրարանցում է Սյունիքի շուրջ...

Սյունիք են այցելել Հայաստանի Հանրապետությունում Լիսովայի դեսպանը, Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի մշտական համակարգողի ներկայացուցիչները...

Օրեր առաջ էլ Սյունիք էին այցելել բրիտանացի պատգամավորները...

Որպես կանոն եվրոպացի չինովնիկները Սյունիքում չեն հանդիպում լրագրողների հետ, մամուլի հրապարակումներ չեն տարածում կամ որևէ այլ ձևով տեղացիներիս չեն պարզաբանում, թե ինչ նպատակով են Սյունիք այցելել, սյունիքյան իրականության ո՞ր հարցերն են իրենց հետաքրքրում և այլն:

Ու քանի որ եկող-գնացող օտարականներին հարց ուղղելու հնարավորություն չունենք, ստիպված ենք այլ ուղղությամբ գնալ:

Եվ ուրեմն՝ կա՞մարզում գոնե մի պաշտոնյա, ով տեղյակ է այդ անցուդարձի մանրամասներին և ով կարող է Սյունիքն ու սյունիքյան շահն արժանապատվորեն ներկայացնել ծպտված օտարականների հետ հանդիպման ընթացքում:

Եթե կա նման պաշտոնյա, ապա ո՞վ է նա. հարցեր ունենք նրան տալու:

Հաջորդը՝ կա՞ Սյունիքում պետական կառավարման մի օղակ, որ ամբողջապես իրազեկված է այդ անցուդարձի հանգամանքների մասին և ի վիճակի է պատասխանելու այունեցիներին մտահոգող տարակույսներին:

Եթե կա նման օղակ, ապա ո՞րն է այդ մարմինը. հարցեր ունենք նրա ղեկավարին...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/khorhrdavor-zargatsumner-syuniqi-shurj-ka-marzum-mi-pashtonya-kam-karavarman-mi-marmin-or-nerkayatsnum-e-erkramasi-shahery>

11.04.2022

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն աշխատանքային այցով մեկնել է Սյունիք

Ապրիլի 11-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ Պաշտպան Գրիգորյանի գլխավորությամբ մեկնել է Սյունիք ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կազմակերպած համատեղ այցի շրջանակներում: Այցին մասնակցում են Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար Լիլա Փիթերս Յահիան, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինը և ՀՀ-ում Լիտվայի դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեն:

Այցը մեկնարկել է համատեղ պատվիրակության՝ Կապանի Կանանց ռեսուրս կենտրոն ու կենտրոնի սոցիալական ձեռնարկություն այցով, որտեղ հանդիպել են Կապանի, Մեղրիի «ՎԻՆՆԵԹ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի ներկայացուցիչներին և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հումանիտար ծրագրի՝ Արցախից տեղահանված շահառուներին:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Քրիստինեն Գրիգորյանը հանդիպման ժամանակ նշել է, - «Պիտի ասեմ, որ որպես Մարդու իրավունքների պաշտպան, իմ ամենակարևոր հինգ առաջնահերթություններից մեկը կանանց տնտեսական, քաղաքական հզորացումն է: Մեր բնակչության կեսից ավելին կանայք են, բայց երբ նայում ենք, թե ինչպես ենք օգտագործում նրանց ներուժը, հասկանում ենք, որ դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու»:

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Ծովինար Հարությունյանը, ով նաև «ՎԻՆՆԵԹ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի ստեղծման առաջին աջակիցներից է, ներկայացրել է հյուրերին ու ցանցի անդամներին և նշել, որ ցանցի փորձը ճանաչվել է լավագույնը:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ն.Գ. տկն. Անդրեա Վիկտորինը, դիմելով ներկա կանանց, ասել է, որ հասկանում է այն դժվարությունները, որոնց նրանք բախվել և բախվում են. «Մենք այստեղ ենք ձեզ լսելու համար, հասկանալու համար ձեր դրությունը, և թե ինչ կարող ենք անել ավելի լավ համագործակցելու համար»:

Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար Լիլա Փիթերս Յահիայի համար սա առաջին այցն է Հայաստանի մարզեր: Մշտական համակարգողի պաշտոնակատարը նշեց, որ իրենք հետաքրքրությամբ կլսեն նաև կանանց առաջարկած լուծումները և թե ինչպես կարող են միասին, հիմնվելով այդ առաջարկվող լուծումների վրա, աշխատանքը մղել առաջ: Տիկին Փիթերս Յահիան շեշտել է, որ կանանց հզորացումը ՄԱԿ-ի գերակա ուղղություններից մեկն է:

Հայաստանում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Տիկին Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեն ասել է, որ Լիտվայի դեսպանությունը Սյունիքում խթանում է վերականգնվող էներգիայի կիրառումը, բայց նաև, որպես հատուկ ուղղություն, աշխատում է կանանց հզորացման համար:

Կապանի, Մեղրիի Կանանց ռեսուրս կենտրոնների ներկայացուցիչները խոսել են իրենց կենտրոնների անցած ճանապարհի, կատարած աշխատանքի, ծրագրերի ու ներկայիս գլխավոր մարտահրավերների մասին և կիսվել իրենց կողմից առաջարկվող հնարավոր լուծումներով:

Իսկ վերջում մտերմիկ քննարկում է անցկացվել կենտրոնների ներկայացուցիչների ու շահառու կանանց հետ:

Վաղը այցը կշարունակվի Կապանի ՄԻՊ գրասենյակում ՀԿ ներկայացուցիչների հետ հանդիպմամբ, այնուհետև՝ պատվիրակությունը կմեկնի Գորիս:

Աղբյուրը՝ <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2193>

11.04.2022

Օ՝ Ժամանակներ. ի՞նչ է կատարվում Կապանի արվեստի քոլեջում

2021թ. հոկտեմբերի 14-ին լրացել է «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն Վարդան Քոչարյանի պաշտոնավարման ժամկետը:

Նոր տնօրենի թափուր տեղի համար մրցույթը նշանակվել է 2021-ի նոյեմբերին:

Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել միայն Վարդան Քոչարյանը:

Մրցույթը տեղի չի ունեցել, քանի որ ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նիստում անհրաժեշտ քվորում չի ապահովվել (խորհրդի կազմը 11 հոգուց է):

Մեկ շաբաթ հետո, գործող կարգի համաձայն, պետք է տեղի ունենար ՊՈԱԿ-ի խորհրդի նոր նիստ՝ մրցույթն անցկացնելու համար:

Դարձյալ տեղի չի ունեցել...

Վերստին ներկա չեն եղել Սյունիքի մարզպետարանի ենթակա հիմնարկների ներկայացուցիչները...

Եվ այդպես՝ վեց անգամ...

Եվ կես տարի հանրապետության ամենանշանավոր երաժշտական կրթօջախներից մեկը տնօրեն չունի:

Տնօրենի պարտականությունները կատարողն Աշոտ Խաչատրյանն է՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալը:

Պարզվում է՝ Կապանում չկա ուրիշ մեկը, որ ունենա հավաստագիր՝ տնօրենի թափուր տեղի մրցույթին մասնակցելու համար, ինչի պատճառով և ձգձգվում է տնօրենի ընտրությունը: Այսինքն՝ թող լինի՝ ով կամենում է, բայց ոչ Վարդան Քոչարյանը...

Իսկ ինչու՞ է Վարդան Քոչարյանը հայտարարվել անցանկալի անձ՝ persona non grata:

Ըստ շրջանառվող խոսակցությունների՝ ա) Կապանի ավագանու 2021 թ. աշնանը կայացած ընտրության ժամանակ պասիվություն է ցուցաբերել իշխանական թեկնածուի քարոզարշավին, բ) քոլեջի երգեհոնային դահլիճի վերաբացմանը նվիրված միջոցառմանը ինչ-որ մարդկանց չեն հրավիրել, թեև այդ միջոցառման կազմակերպման հետ քոլեջը որևէ առնչություն չի ունեցել:

Թերություններ՝ կապված քուլեջի կրթական-դաստիարակչական-ֆինանսական գործունեության առումով, Վարդան Քոչարյանին չի վերագրվում:

Շատ կարևոր մի հանգամանք ևս. ինչպես նշեցինք՝ ՊՈԱԿ-ի խորհրդի նիստերին՝ նվիրված տնօրենի մրցույթի անցկացմանը, չեն մասնակցում միայն խորհրդի այն անդամները, ովքեր աշխատում են Սյունիքի մարզպետարանի ենթակա կառույցներում: Եվ առ այսօր հանդուրժվում է այն խորհրդի գոյությունը, որը կես տարի շարունակ հպարտորեն կատարում է խամաճիկային կառույցի դեր: Վեց ամիս շարունակ քուլեջի խորհրդի գործունեությունը տապալած անդամներին ոչ ոք պատասխանատվության չի կանչում: Ավելին, նրանց կարգադրված է մասնակցել խորհրդի այն նիստերին, որի օրակարգում տնօրենի ընտրության հարց չկա:

Ի դեպ, Վարդան Քոչարյանը Սյունյաց աշխարհի նշանավոր զավակ, իսկական (և ոչ դեկորատիվ) գորահրամանատար, գեներալ-մայոր Վալերիկ Քոչարյանի եղբայրն է, ով Արցախյան երրորդ պատերազմի վերջին փուլում և հաջորդող ժամանակաշրջանում Սյունիքի սահմաններն արժանապատվորեն պաշտպանող (Կապանի տարածաշրջանում) գորամիավորման հրամանատարն էր:

Ահա այսպիսի բաներ...

Ե՞րբ տեղի կունենա Կապանի արվեստի պետական քուլեջի տնօրենի ընտրությանը նվիրված նոր մրցույթը:

Պատասխանը մեկն է՝ երբ կգտնվի հավաստագիր ունեցող որևէ մեկը և երբ լիակատար վստահություն կլինի առ այն, որ նորահնար թեկնածուն ապագա մրցույթում կստանա ձայների մեծամասնություն...

Իսկ Վարդան Քոչարյանը, որքանով տեղեկացանք, կմասնակցի սպասվող մրցույթին:

Մնում է հրապարակված տեսնել «Կապանի արվեստի պետական քուլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի այն անդամների ցուցակը, ովքեր վեց ամիս շարունակ, խաղալիք դարձած, վարկաբեկում են մեծահամբավ ուսումնական հաստատությանը: Կապանցիները իրավունք ունի իմանալու իր այդ (վայ) զավակների անուն-ազգանունները...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/o-zhamanakner-inch-e-katarvum-kapani-arvesti-qolejum>

11.04.2022

44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների հարազատների առաջարկությամբ և մասնակցությամբ Գորիսում կստեղծվի խորհուրդ. Համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի հետ հանդիպմանը զոհվածների հարազատները քննարկել են խորհրդի գործունեությանն ուղղված մի շարք հարցեր

Զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված հարցերը գտնվում են համայնքապետարանի ուշադրության կենտրոնում, սակայն միշտ չէ որ հնարավոր է լինում ամբողջովին գնահատել ընտանիքների կարիքները, մտահոգող հարցերը: Զոհված զինծառայողների հարազատները՝ Գորիս, Տեղ, Տաթև համայնքներից, հանդիպել են Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի հետ և առաջարկել ստեղծել հանձնաժողով, որի կազմում կլինեն զինծառայողների հարազատները, ովքեր ժամանակ առ ժամանակ կներկայացնեն իրենց մտահոգող հարցերը, հանդես կգան առաջարկություններով:

Հանդիպմանը ներկա են եղել նաև Ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված զինծառայողների հարազատները: Համայնքի ղեկավարն ընդգծել է, որ յուրաքանչյուրիս պարտքն է ամենօրյա աշխատանք տանել՝ ուշադրության կենտրոնում պահելով բոլոր ընտանիքներին, հետամուտ լինել, որպեսզի մտահոգող հարցերը հրատապ կարգով լուծում ստանան:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/5100306453396894>

08.04.2022

Կայացել է Մեղրիի սահմանային անցակետի արդիականացման և վերակառուցման շինարարական աշխատանքների միջազգային մրցույթը

Մեղրիի սահմանային անցակետի շինարարական աշխատանքներն իրականացնելու համար 2021թ. դեկտեմբերի 23-ին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնումների էլեկտրոնային համակարգում տեղադրվել էր մրցութային փաթեթ և հայտարարվել էր մրցույթ: Հայտերի ընդունելության վերջնաժամկետի լրանալով պայմանավորված՝ մրցութային ամբողջական փաթեթների ուսումնասիրման նպատակով գնահատող հանձնաժողովի կողմից պաշտոնապես բացվել են կազմակերպությունների ներկայացրած հայտերը:

Գնահատող հանձնաժողովը, որի կազմում են ՊԵԿ-ի և այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ, կուսումնասիրի տվյալ կազմակերպությունների ներկայացրած մրցութային ամբողջական փաթեթները, նրանց նախկինում կատարած աշխատանքներն ու ներկայացրած գնային առաջարկները:

Ներկայացված հայտերի վավերականության ժամկետը 120 օր է:

Հավելենք, որ «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիրն» իրականացվում է Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև ստորագրված վարկային և դրամաշնորհային համաձայնագրի համաձայն: Ծրագրի արժեքը մոտավորապես 21 միլիոն եվրո է, շինարարական աշխատանքները տևելու են 30 ամիս:

Սահմանային անցակետը լինելու է գերժամանակակից, անցակետի գործառույթները լիարժեք ապահովելու նպատակով՝ նախատեսվում է կառուցել երկհարկանի վարչական շենք՝ 4000 քմ կառուցապատման մակերեսով՝ տանիքում 1500 քմ արևային էներգակայանով, 40000 քմ ավտոկայանատեղի, մուտքային և ելքային 5 հոսանքագիծ, ինչպես նաև հազեցած է լինելու գերժամանակակից ռենտգեն-սարքավորումներով:

Մեղրիի անցակետի արդիականացումը կարագացնի և կհեշտացնի սպասարկումը, ինչպես նաև կնպաստի «Հյուսիս-հարավ» տրանսպորտային միջանցքի ակտիվացմանը՝ խթանելով նաև տարանցիկ փոխադրումներին:

Աղբյուրը՝ <https://www.armtimes.com/hy/article/234599>

05.04.2022

Թե ինչ որակ ունի սահմանապահ Խոզնավարին մատակարարվող խմելու ջուրը. և ոչ միայն այդ մասին

Խմբագրությունը վերջին օրերին սահմանապահ Խոզնավարից ահագանգեր է ստանում գյուղի խմելու ջրի որակի վատթարացման մասին, ինչը պայմանավորված է ձյան առատ տեղումներին հաջորդած ձնահալքով:

Խոզնավարցիներին, սակայն, մտահոգում է ոչ միայն խմելու ջրի՝ կեղտաջուր հիշեցնող վիճակը:

Սահմանապահ գյուղի բնակիչներին անհանգստացնում են նաև անվտանգությանն առնչվող հարցերը, ինչպես և Խոզնավար – Վերիշեն ճանապարհի գրեթե անանցանելի վիճակը, որը, բազմաթիվ խոստումներից հետո անգամ, չի բարելավվում:

Խոզնավար գյուղի բնակիչներին մտահոգող հարցերին առավել հանգամանալից ծանոթանալու համար գրուցեցինք գյուղի բնակիչ Հրայր Ալավերդյանի հետ:

- Հարգելի Հրայր, նախ՝ կուզենայինք իմանալ, թե գյուղը քանի՞ տեղից է խմելու ջուր ստանում և որտե՞ղ են գտնվում ջրաղբյուրները:

- Գյուղը խմելու ջուր է ստանում մեկ տեղից, ավելի ստույգ՝ տարբեր տեղերից ջուրը հավաքվում է մի ջրամբարի մեջ, որտեղից խողովակաշարով հասնում է գյուղ:

Ապրիլի 1-ից հետո՝ ձնհալի հետևանքով, գյուղ հասնող խմելու ջուրը պղտորվել է՝ դարձել ցեխախառն:

Ասեմ, որ գյուղի խմելու ջուրը սկիզբ է առնում Սև լճի ներքին հատվածից: Տղերքը եղել են այնտեղ և պարզել՝ ակունքի հատվածում է պղտորումը տեղի ունենում ու լցվում ջրամբարի մեջ:

- Ջրամբարը, որից սկիզբ է առնում գյուղի խմելու ջուրը, մեր վերահսկողությամբ՝ ներքո է, թե՞ ոչ:

- Աջ և ձախ կողմերում մեր դիրքերն են տեղակայված. այդպես է Սև լճի շրջանում տեղի ունեցած հայտնի իրադարձություններից հետո:

Այլ բան է հուզում մեզ. գյուղում կան ծերեր, երեխաներ, իսկ խմելու ջուրն ամբողջապես ցեխաջուր է և ավելորդ է խոսել դրա՝ սանիտարական նորմերին համապատասխան լինելու մասին: Բանն այն է, որ երկար ժամանակ խողովակների փոխման կամ վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել: Խողովակաշարը, որ անցկացվել էր խորհրդային տարիներին, մի մասը մետաղյա է, մյուս մասը՝ ասբեստից: Վերջին այս հատվածը փոխել են մոտ տասը տարի առաջ, իսկ մետաղյա հատվածը մնում է:

- Իսկ ի՞նչ է արվում ստեղծված վիճակը փոքրիշատե շտկելու համար:

- Ընդամենը գյուղից մի քանի հոգի բարձրացել, ուսումնասիրել են տարածքը, տեսել, որ այդտեղ ահագին ձյուն է նստել, և ձնհալը կարող է առնվազն մի ամիս տևել: Իսկ եթե անձրևներ սկսեն, վիճակն ավելի կբարդանա: Այս պահի դրությամբ՝ ջրի հետ հող է գալիս, երբ ջուրը լցվում է բաժակի մեջ, պարզորոշ դա երևում է...

- Որպես այդ տարածքին ծանոթ և տեղյակ անձնավորություն, ի՞նչ ելք էք առաջարկում:

- Ելքն այն է, որ ջրակունքը մաքրվի, մինչև ջրամբարի հատվածը կարգավորվի, որ ձնհալից առաջացած ցեխաջրերը չխառնվեն խմելու ջրին: Երկրորդ՝ խողովակաշարի մի հատվածում վնասվածք կա, ջուր է թողնում այդ տեղից: Որոշ տեղերում էլ խցանումներ կան, եթե հնարավոր է՝ այդ հատվածները պիտի հիմնանորոգել:

- Գյուղին մատակարարվող խմելու ջրի հիմնախնդիրն արդեն պարզ է, իսկ ինչպե՞ս էք գնահատում բնակավայրի անվտանգությունը:

- Կարծում եմ՝ 23 հատվածում տեսախցիկներ պիտի տեղադրվեն: Սյուներ են բերել, այդ հարցը օրերս կլուծվի: Չեմ ուզում մանրամասնել, բայց անվտանգության խնդիրը մեր տեսադաշտում պիտի լինի միշտ:

- Գյուղի վարչական տարածքից կա՞ն հատվածներ, որ ադրբեջանական կողմն է վերահսկում 2020 թ. դեկտեմբերի 18-ից հետո :

- Սև լճի հատվածում նման բան կա... Ասում են՝ 250-300 հեկտար՝ խոտհարք և արոտավայր: Ճիշտ է՝ արոտներն այդքան չեն օգտագործվել նախկինում, բայց խոտհարքից գյուղի բնակիչներն օգտվում էին, մինդեռ անցյալ տարվանից այլևս դա հնարավոր չէ:

- Մեզ հետաքրքրում է Վերիշենից Խոզնավար ձգվող ճանապարհի խնդիրը. այն կառուցվել է 1980-ական թվականներին և վերջին տարիներին դժվարանցանելի էր դարձել: Այդ ճանապարհը բարեկարգվե՞լ է, թե՞ շարունակում էք Գորիս այցելել Խնածախով:

- Ոչ մի աշխատանք չի կատարվել: Բացարձակապես: Հիմա ավելի սարսափելի վիճակում է: Այս վերջին ձնհալից հետո փոսերն ավելի են խորացել: Բայց քանի որ այդ ճանապարհը եռակի անգամ կարճ է՝ Գորիս հասնելու համար, շարունակում ենք օգտվել դրանից: Այդ ճանապարհից են օգտվում նաև Վաղատուրի բնակիչները, որոշ դեպքերում՝ խնածախցիները:

- Ուրիշ ի՞նչ հուզող խնդիր ունի խոզնավարցին:

- Հիշում եք, որ 2021 թ. նոյեմբերի 16-ին հակառակորդը գրոհ ձեռնարկեց Միսիանի ուղղությամբ: Նրանց հրետանին աշխատում էր մեր գյուղի վերնից: Հրետանային համազարկերի ձայնը պարզ լսվում էր մեր գյուղում, ինչը չէր կարող որոշ անհանգստություն չառաջացնել բնակչության շրջանում՝ առայսօր... Բանն այն է, որ գյուղի դպրոցն ապաստարան չունի, որտեղ 60-ից ավելի մարդ է հաճախում՝ մանկավարժ, դպրոցական, տեխնիկական աշխատող: Դպրոցին կից տարածքում այդ գործը կարելի է նախաձեռնել: Թուրքին վստահել չկա, ցանկացած պահի կարող է սադրանքի դիմել...

- Որքանով հայտնի է, Արցախյան առաջին պատերազմի ժամանակ գյուղամերձ քարանձավներն էիք օգտագործում պատսպարվելու համար:

- Այո, 1990-ականներին օգտագործել ենք, բայց հիմա ո՞ր դարում ենք ապրում, ամեն ինչով հագեցած ապաստարան է անհրաժեշտ գյուղին:

2021-ի նոյեմբերի 16-ին, երբ հակառակորդի հրետանին սկսեց աշխատել, զանգահարեցի դպրոց և հորդորեցի, որ երեխաներին ազատեն պարապմունքներից...

- Ուրիշ ի՞նչ կավելացնեիք ասվածին:

- Խոզնավարից Վաղատուր ճանապարհն ամբողջապես դիտարկվում է հակառակորդի կողմից:

Ունենք այլընտրանքային ճանապարհ, որի վրա հողային աշխատանքներ պիտի կատարվեն: Այն բարեկարգելու դեպքում մեծամասամբ ճանապարհն ապահով կդառնա: Այդ ուղղությամբ առաջնահերթ միջոցներ պիտի ձեռնարկել...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/te-inch-orak-uni-sahmanapah-khoznavarin-matakaravokh-khmelu-jury-ev-och-miayn-ayd-masin>

04.04.2022

Սյունիքի տարածքով անցնող միջպետական ճանապարհներ. դասեր քաղելու ժամանակը

Մարտի երկրորդ կեսին Սյունիքում տեղացած առատ ձյունն իսկական փորձություն էր տարածաշրջանի ճանապարհների համար:

«Սյունյաց երկիրն» ուշադրությամբ հետևում էր այդ օրերի զարգացումներին և պարբերաբար հանդես գալիս հրապարակումներով:

Առավել կարևորվում էր Մ-2 մայրուղուն փոխարինող Շինուհայրի խաչմերուկ-Տաթև-Աղվանի-Կապան ճանապարհը, որտեղ ծանր կացություն էր ստեղծվել հատկապես մարտի 18-ից 26-ը:

Նշված մայրուղին այդ օրերին դժվար անցանելի կամ գրեթե անանցանելի էր բեռնատար ու կցորդով մեքենաների համար:

Եվ, այդուհանդերձ, մայրուղով կարողանում էին երթնելել առանձին մարդատար մեքենաներ, ինչպես և որոշ բեռնատարներ. ըստ մեր դիտարկումների՝ մարտի 18-ից 25-ը՝ մոտ 135 բեռնատար էր կարողացել հաղթահարել դժվարությունները :

Կապան – Աղվանի - Տաթև - Շինուհայրի խաչմերուկ մայրուղին լիովին անցանելի դարձավ մարտի 26-ին:

Այդ օրը, մեր խմբագրության ունեցած տեղեկությունների համաձայն, Կապանից դեպի Տաթև է շարժվել մարզկենտրոնի արևելյան մատույցներում շրջափակված մոտ 180 մեքենա, իսկ Շինուհայրի խաչմերուկից դեպի Կապան (Տաթև- Աղվանի մայրուղով)՝ 200 մեքենա:

Հիմա գարունն իր իրավունքների մեջ է: Եվ ուրեմն ժամանակն է հետադարձ հայացք ձգելու այդ օրերին և դասեր քաղելու մարտի 18-ից 26-ը Սյունիքի միջպետական ճանապարհներին ստեղծված խայտառակ վիճակից, որպեսզի ապագայում ու երբեք նման կացության մեջ այլևս չհայտնվենք:

Իհարկե, այդ օրերին իրենց գործն էին կատարում և՛ Կապանի, և՛ Գորիսի ճանապարհաշինարարները, որոնց տնօրինության ներքո է նշված մայրուղու ձմեռային պահպանությունը:

Բայց ականատեսներն առանձնակի դրվատանքով են խոսում Ազատ Գասպարյանի գլխավորած Մեղրու ճանապարհաշինական ընկերության մասին, որի մի ջոկատ՝ արդիական մեքենաներով ու փորձառու մասնագետներով (Հովհաննես Սարգսյանի ղեկավարությամբ) օգնության էր հասել Կապան-Տաթև մայրուղում շրջափակված մեքենաներին՝ հիմնովին փրկելով դրությունը:

Շինուհայր-Տաթև-Կապան մայրուղում ստեղծված արտակարգ իրավիճակում նվիրական աշխատանք էր կատարում ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական ջոկատի 6-րդ սպայական վաշտի 2-րդ սպայական դասակը՝ գլխավորությամբ դասակի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ Արմեն Սարգսյանի: Առանց ճանապարհային ոստիկանների շուրջօրյա և խելամիտ գործունեության իրավիճակը կվերածվեր իսկական խառնաշփոթի:

Աղբյուրը՝ <https://syuniacyer.kir.am/syuniqi-taratsgov-antsnokh-mijpetakan-chanaparhner-daser-qakhelu-zhamanaky>

Կազմող՝ Ս. Ալավերդյան